

ԿԵՐՈՊՈՅԻՆԻ ամս է ըստ ան-
գայ ավագին եւ ի վեճ .
Տ-ըրին գիւնէ 24 շ-բու-
թ 12 շ-բու-
Մ-է հոդ 40 ի-մրա



Ա-թ-եւ-ս-չեն խորուգը բու-է
Դ-ըր երկալի լրագիւնելը
ի բարիր պիտի նամբե-
Լ-ըր գրի պերբերելու-լու-լու-
մ-իմբուգի պիտի ս-ըր-ին .

Ա Բ Ճ Ա Խ Ի Կ Տ Ա Բ Օ Ւ Ա Յ

Ե Տ Ս Ա Բ Ի Թ Ի Ւ 18

1864.

Մ Ե Յ Ե Ա 15

Դ ա լ լ ա կ

(Ըստունակութիւն եւ վերջ :

Դ րենք նա եւ անոնց համար, որոնք
պարագով կ ամուսնանան, եւ հաղիւ քա-
նիմ շարսթ կամ քանիմ ամիսը ամուսնա-
կան սէրը կ վայելեն . “ Ա հ քան զմահ խիստ
է ” , պարատերով երկիւ զը զինքը կ վարէ
եւ լալով կ մեկնի իր տանէն օտար ու հե-
ռաւոր երկիրները , յաջող եւ սնյաջող
վիճակի կ տիրանոյ նա . իսկ ամուսին, Աստ-
ուած մի սրացէ, եթէ պաշտպան կամ իր-
համակալ ալ չունենայ . անտանելի է ասոր
ցուը . . . մանաւանդ երբոր երիկը քանի
ուարի յուշացաւ կամ զործը անյաջող
գտնու ւնցաւ : Ա մաւրին այս եւ այն նեղու-
թիւններէ սնձնալութիւն զուոր կ հասնի .
այս եւ սյն անձնքներէ փոխանակ սփո-
փանքը կամ օգնութիւն սպանալու , չափ
ու բարի խօսքեր կ լսէ . զժբազգ, ցաւա-
միրտ, պարզամիտ ու տկարամիտ կինը շու-
տով մոռնալ կ ակարի իր հարազատ ամուս-
նոյն սէրը և ուրբ եկեղեցւ պատուերը .
Ա հ կ փոխէ նա իւր սիրուը, կ փոխէ եւ իւր
ուները ուրիշի դանենք քալելու . Ա բդէն
այս աշխարհը բանաբարութիւնք եւ այս
պիսի սնձիարզութիւնք առանելապէս քըր-
դ երէն շատ կ քաշեն չայերը :

Ո ՞ զիս սրհամարհէք , որ կ գրեմ այս
գառն ցաւեր , ով Տարօնոր եւ Հայուսան-
եաց տառապեալ եւ աղետալի Հայեր . իմ

հայրեր , մայրեր , քոյրեր , եղբայրներ , ոհ թոյր
տուեք երեւան հանել ձեր ներքին վերքեր
ու վիշտելը . զոր ես քանեէն մէկը հազիւ-
դիանմ գրել . թող տեսնան իմանան իրենք
ալ ցաւին ու գարման . գանեսն մեր ազգի
կարող ու կառավարող ազգասէրներ . թէ
այս ամէն չարիք մեր մէջ մահերն զմեզ կը-
խեղդն մեր անուռութիւննէն ու ար-
գիտութենէն . քահանաց չ կայ իմաստուն
որ սուրբ եկեղեցւ օրէնքը ինքն գիտնա-
լէն զինի ժողովրդնան . ալ հասկցընէ .
Քրիստոսի Ա . Ա ւետարան ինքը հասկնայ-
ու ահոր պատուերներ ժողովրդեան բա-
ցարե . Եթէ ամուսնացեալք գիտենան
Ա . ամուսնութեան օրինաց պարաքերը , եւ
թէ ինչ մեծ խորհուրդ է այն , զոր Քրիստոս
կը խօսի եւ Պօղոս առաքեալը կ հատա-
ռէ . և խորհուրդն այս մեծ է , բայց հս ա-
նեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի ” : Ա նը
գիտէ թէ ինքը իրբեւ Քրիստոսի եկեղե-
ցի՝ մայր մի է . որ զանակներ պիտի ծնանց
հօր Ա սառւծ ոյ որդեգիր ու Քրիստոսին
ժառանգակից առնելու համար . նշնպէս
երկուքն իմիասին թէ գիտոցն թէ կին , զի-
տեն ինչ պարաքեր ունին առ միմեանս .
ինչ պարաքեր ունին իրենց զաւակաց . կը-
ծանցան թէ ազդիմը սկզբնաւորութեան .
հաստառութեան , մեծութեան , յառաջա-
գիմութեան եւ երջանկութեան ազբիւրը
սուրբ ամսւանութենէն և բարի ընտանիք-
ներէն կ ծագի , նշնպէս եւ ասոնց հակա-
ռակը . վասն զի մանուկը իր ծնողաց կաթին
հետ թէ կրթութիւն թէ անկրթութիւն

թէ չար թէ բարին ծնօղքներէն կ սորվի .
Բայց ամիկայ մեծ խնդիր է , թողունք , եւ
գարձեալ ողբալով ասենք , Բանի քարո-
զիչներ այսչափ տարիներ ձեզ քարոզներ են
խօսեր . քանի առաջնորդներ ձեր գեղեր
յատուկ այցելութիւն են էլեր , եւ ձեզ
խրատեր , միմիթարանք , ու հոգեւոր պէտ-
քեր , են հոգացեր . գարձեալ փառք ձեր
Հայ սիրտերուն , ես մատաղ լինիմ ամէն
Հայ հոգւոյն . որ առանց ասոնց , եւ ի մէջ
մահագոյն ցաւոց օրինապահ ու Աստուա-
ծավախ էք .

Ո՞ւծ խորհրդածութիւն եւ երկար գը-
րութիւն կ պահանջէ այս յօդուածը . բայց
մեր զաւը զմեզ կ մոլորցընէ

Համառօտել սկսենք վարդիկ դիտողու-
թիւնմ՝ ալ անելով վասպուրականի ու
անոր գեղերու հայոց մէջ եղած այս սովո-
րութեանը վրայ : Վան քաղաքի մէջ վե-
սայի ծախսը քիչ է . եւ աղջկանը շատ .
աղջկան ծնօղք պարտաւոր են աղջկան լաւ
զգեստներ ու կերպ կերպ զարդարանքներ
անել եւ փոքրիկ ընծաներ ալ փեսային հա-
մար պատրաստել . թէ եւ այս բանը Ո՞շյ
մէջն ալ կայ . եւ այս իսկ է օրէնք . վասնզի
աղջիկն իրաւունք ունի իւր ծնողաց ժա-
ռանդութենէն բաժին առնել . նյնպէս եւ
փեսայն թեթեւ ընծայովմը կ բաւականա-
նայ զանոնք պատուել : Այս չափաւոր ու
օրինաւոր կանոնք լուսահոգի Պարրիկ սըր-
բազանի առաջնորդութեան օրով հաստատ-
ուեցաւ վանայ մէջ . քան զայս յառաջ
այնտեղն ալ չափազանց ու ազօրէն էր ,
մանաւանդ շատերուն անձեռնհաս էր հարս-
նիք անել : Այս հին չափազանցութիւն
վանայ գաւառներու ու գեղերու մէջ կը
գտնուին տակաւին , եւ սասր վնասակար
հետեւութիւնն ալ կ քաշեն . ու դժբաղդ
են . չեմ գիտեր յաջորդ առաջնորդներն ալ
հոգացեր ու չեն կարողացեր բառեալ տալ
եթէ անհոգ եղած են :

Հայաստանի մէջ եղած այս սովորութեան
հակառակը կ տեսնուի Պօլսոյ ու Տփխիսոյ
Հայկազանց մէջ . շատ ստակ եւ մեծ օժիտ
պէտքէ լինի աղջկան հետ , որպէս զի ամուս-
նանալ համբին երիտասարդք անոնց հետ ,
բայց աս ալ գիտնալու է որ այն տեղերու

երիտասարդներ շստերը չորետասարդ են .
նյնպէս եւ աղջիկները իրենց հասակը ան-
ցուցած : Ամենամեծ դժբաղդ թիւններ
են ասոնք մեր ազգի մէջ եւ թշուառութիւն
կուսանաց եւ երիտասարդաց . որոց կենաց
գարնան օրին անպառզ կանցնին , սերունդ-
ներ կ սպասին . եւ ուրիշ գաղտնի չարիքմն-
ալ կ հետեւի : որոյ վրայ ցաւիլ եւ լուռ
անցնիլ պէտք է :

Բանիմ աեղեր գիտենք , ուր պստանիք
16 տարու եւ աղջկունք 12—13 տարու
կ կարգեն , ինչպէս խորին Քիւրդիստանու
մէջ բնակած պարզ Հայեր :

Եղրակացնել սկսենք մեր խօսքը դառ-
նալով կրկին մեր Տարօնը . այսուեղի նա-
խորդ առաջնորդներէն եղեր են ոմանք . որ
կամեցեր եւ ջանացեր են բառնալ այս լու-
լնը , եւ ինչ միջոց որ ի գործ դրեր են՝ չի
յաջողեր . Հայրիկ՝ այս բանի համար շատ
խորհեցաւ , բերանացի շատերուն խօսեցաւ ,
եւ առանձին շրջաբերական պիտի հաներ
արգիլէլ տալու համար . բայց նա ինքը ոչ
միայն առ այս այլ եւ շատ բարեկարգու-
թեանց ու իրաւանց , օրինաց եւ աղդային
բարեաց մնաց . անձեռնհաս . . . բայց լոենք
այս եղ գարձեալ . եւ գարձունենք մեր
աչքը յուսալ զանոնք գեր . Երեմիա վար-
դապետէն , որոյ խնամոց յանձնուած է
Տարօնոյ հօտը . եւ որոյ բարի կամք ու բա-
րեշն ջանքը յայտնի է ամենուն :

Այս գու ով ով իմ ցանկալի Տարօն եւ
մայր Հայաստան . քո անբաւ թշուառու-
թեանցդ վրայ այս եւ այսպիսի ցաւեր ալ
գու քեզէն անզգ այսպէս եւ կամաւորա-
պէս կ կլես ու կ մաշխ . խղճալի , հարստու-
թիւն չունիս , արհեստ չունիս . այս կողմայն
կողմ փախչելով , ունեցած չունեցածդ պար-
տուց վճարելով , յափշտակութեանց աս-
լով . քան զթաչունմը խեղճ . աստանդական
թափառական , օտարական , մուրացկան . եւ
ի վերայ այսոր ամենայնի անչափասէր , ապօ-
րինաւոր եւ քեզ վնասակար սովորութիւն-
ները չես թողուր . Երանի՛ թէ այդպէս
պինդ բռնէիր այն օրէնքները եւ սուրբ
պատուէրները . որ զքեզ կրկին կենօք երջա-
նիկ կառնէին . երկնից Ճանապարհը քալել
գիտնայիր . ունեցածդ հողիկ վարել եւ ա-

Քուե

- Արժ. Տ. Յակովը Պատիկեան 27
 " Տ. Պաշտամար Մայթասեան 24
 Մեծայարդ Վարդան ազայ Մամիկոնեան 25
 " " Մ. Մանվան " Մ. Մարգարեան 16
 " " Ղազար " Մխիկեան 15
 " " Պ. Մ. Բարահամ (Օհաննէսեան 14
 " " Պ. Գ. Բասպար Առաքէլեան 22
 Մշշ մէջ Թաղականաց ընտրութեան
 քուէարկութիւն պիտի լինի այս կիրակի
 մայիս 17 :

Անահայրներուն ալ գիր գրուեցաւ,
 որ իրենց թէմական գեղերուն մէջ եղած
 արու անձանց թիւերը գրեն որ գեղերն
 ալ անմիջապէս սկսուի դործաղրութեան
 Գիր. Առաջնորդի անխնջ ջանքը ինչ-
 պէս իւր ամէն պաշտամանց մէջ, առաւել
 եւս այս մասին մեծապէս գովութեան ար-
 ժանի է. որ այսպիսի տեղմը յաջողցուց եւ
 պիտի յաջողէ դիւրութեամբ գործադրել
 Պահանագրութիւն շնորհիւ նորընտիր
 (Օգնական ժաղովն) որոնք խոհեմ եւ պատ-
 ուաւոր անձինք են :

Երկու Հայեր

- Ա. Ազգերիս սիրենք, ընկեր :
 Բ. Խրացնէ դուն խենիր ես եղեր :
 Ա. Արդարեւ ազգիս ուր զիս խենդ է ըրեր :
 Բ. Ասա Լատուած խելքո գլխէս է առեր :
 Ա. Իներես, նոյն թքն Աստուած այս սէրը
 իմ պրտի մէջն է հաստատեր :
 Բ. Լողայք, ինչ Կնշանակէ զազգ սիրել :
 Ա. Ազգին ընդհանրութեան եւ մասնաւ-
 րին օդուառ ընծայել :
 Բ. Հը քա ազգը ինչ սզգ է մասցեր, կամ
 մեք ինչ կարող ենք իրեն անել :
 Ա. Ինչ որ պարտաւոր ենք եւ ինչքան որ
 կարող ենք :
 Բ. Ասա ինչոր ունինք խենդի պէս վասո-
 նենք, և աղքատու խսցաւառակ ապրինք :
 Ա. Ո՛հ եթէ հարկը պահանջէ ապրինք ալ
 ազգի համար պէտք է զոհել :
 Բ. Ինկեր. Ա. Ասետարանն ալ կծիծաղի
 այդ խօսքի վրան. " Օ ինչ օգուած է
 զաշխարհ շահել եւ զանձն տուժել :
 Ա. Կամաց Յիսուսին դըպար, Դողդութայի
 զլուխը պէտք է ր այդ խօսքը յիշեցնէիլ

Փողշին. որ ուխտեց եւ կոքեց իր արիւ-
 նովը զանձն ի վերայ բարեկամին գնել .
 և առաւել առ ոչխարս կորուսեալ տանն
 Խարյութիւն իր Առաքեալները զրկել :
 Տ. Ա. Ազգի է . ես գրեանց շեմ հա-
 կընար. սակայն ազգը սիրել, ինձ համար
 ունացնութիւն է . մոզ ուրիշները սիրեն
 Ա. Ազգի մէջ ուրիշը չկայ. ամէնքս մի եմքը
 Ի. կուր կրառագատես զիս, ընկեր. մեր
 ազգը անարժան է :

Ա. Ինչնւ :

- Բ. Վասն զի ապերտիստ է :
 Ա. Կ զարմանամ. քանի որ մենք աներախտ
 ենք, ալ ինչ կդատենք :
 Բ. Ա. Ա. ազգ չի յառաջանար :
 Ա. Ինչնւ :
- Բ. Վասն զի անմիարան է :
 Ա. Ա. չէջը մտիր. ու փորձենք. ապա թէ ոչ
 ի հարկէ երբ դու. ինձ հետ անմիարան
 ազգը ինչով լինի միարան :
- Բ. Տայց ազգը սիրել մարդու փոր չի կը-
 տացներ. գտաւառ չերեր. մանաւանդ
 անիծած է հայե. Հայուն մի հայել :

Ա. Ա. յակէս անուս եւ անյօս ևն դեռ մեր
 ազգի շատերը . ոհ եւ անոր համսր Առ-
 տուածն ալ մեզմէ իր ձեռքը կարծես վեր-
 ցուցեր . Դիմա ազգին օգուածմ' շհասուցած,
 ամէն մարդ ազգէն իրեն օգուած կ պահան-
 ջէ. երբ անձին կամ բասկին փոքր ինչ պաշ-
 տօն հասնի ազգին ծառայութեան նուիրե-
 լու. կըարանայ ե. կ զայրանայ. բայց անդին
 եր կրից եւ ուրիշներու բրից կ զոհվի անձն
 ալ գանձն ալ, ու ամենեւին հոգ չըներ :

Անիծած է. մեր ազգը, կնախապաշարէ
 Հայուն. ինչովսկ անիծած է որ զազգն այն-
 պէս կ ճանաչէ : Փոխանակ ջանալու զմեզ
 Աստուծոյ օրհնութեան տրժանի առնել ,
 մըշտանէծք վրանիս կ դիզենք :

Ա. Երանին թէ միանգամ ձանչնայինք մեր
 զմեզ և գործէինք ինչ որ պարտէր մեզ .
 Աւումիարաններ, երբ պիտի ծաղկիք եւ
 հացունեք Հայատանի մէջ բարի պառւզ-
 ներին. գուլըս Աստուած, երբ պիտի ըզ-
 զմեզ լուսաւորես, այս խաւարներէն
 ազատ անես : — Աղորմիա մեզ :

Կամբագիր Տարօնց Արծուիկիս
 Գ. Արուանձտեանց, Ճետ Ա. Արծուոյն
 ՏԱՐՈՆ · ԻՍ · ԿԱՐԱՊԵՏ · ՏԻՊ · ԱՐՁՈՒՈՅՆ